

Կ Ա Ր Ծ Ի Ք

**Հմայակ Վահանի Մանուկյանի՝ «Հաշտարարի գործունեության արդյունավետությունը պայամանավորող անձնային և սոցիալ-հոգեբանական գործոնները (քաղաքացիաիրավական վեճերի լուծման համատեքստում)»**

վերստառությամբ ԺԹ.00.03 – «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Հմայակ Վահանի Մանուկյանի «Հաշտարարի գործունեության արդյունավետությունը պայամանավորող անձնային և սոցիալ-հոգեբանական (քաղաքացիական վեճերի լուծման համատեքստում)» թեմայով ատենախոսությունը հիմնահարցի կոմպլեքս հետազոտություն է: Ատենախոսության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հեղինակին հաջողվել է լուծել իր առջև դրված գիտական խնդիրներն ու նպատակները և խորն ու հանգամանալի հետազոտման ենթարկել հաշտարարի գործունեության արդյունավետությունը պահմանավորող անձնային և սոցիալ-հոգեբանական գործոնները, շատ դեպքերում կատարել գիտականորեն հիմնավորված առաջարկություններ:

Գրախոսվող ատենախոսության կառուցվածքը համարժեք է հետազոտության առարկայի առանձնահատկություններին և հետազոտական խնդիրների շրջանակին: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, եզրակացություններից, գրականության 175 անուն գիտական աղբյուրների ցանկից և հավելվածներից: Ընտրված մեթոդիկաների փաթեթը համապատասխանում է հետազոտության նպատակին և դրված խնդիրներին:

Ներածական մասում հանգամանորեն հիմնավորված է հետազոտության արդիականությունը, ներկայացված են ուսումնասիրության օբյեկտը, առարկան, 2 վարկած, նպատակը, խնդիրները, մեթոդաբանական հիմքերը, ուսումնասիրության մեթոդները, գիտական նորույթը, տեսական և կիրառական նշանակությունը, պաշտպանության ներկայացվող դրույթները:

Ատենախոսության առաջին «Կոնֆլիկտների առաջացման կառուցակարգերի և դրանց լուծման տեխնոլոգիաների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների վերլուծություն» գլխում ներկայացված է հիմնախնդրի պատմությունը, հաշտարարի մասնագիտության նկատմամբ մոտեցումները և Հայաստանում հաշտարարության ինստիտուտի ձևավորման խնդիրները: Այս գլխում կատարված է նաև կոնֆլիկտի հիմնախնդրի հայեցակարգային մոտեցումների, տարբեր տիպի կոնֆլիկտների դեպքում բանակցային գործընթացների, կոնֆլիկտների հանգուցալուծման ռազմավարությունների և մարտավարությունների կիրառման առանձնահատկությունների վերլուծություն: Դիտարկված է հաշտարարությունը՝ որպես կոնֆլիկտների հանգուցալուծման այլընտրանքային ձևաչափ:

Ներկայացված է հաշտարարության ինստիտուտի կայացումը և ժամանակակից կարգավիճակը ՀՀ-ում: Հեղինակը նշում է, որ Հայաստանի Հանրապետությունում այդ համակարգը գտնվում է ձևավորման սկզբնական փուլերում, և դրա կայացման համար անհրաժեշտ է գիտական մոտեցում ցուցաբերել, այնինչ ՀՀ-ում հաշտարարության ինստիտուտի ձևավորման, այդ համակարգի նկատմամբ վերաբերմունքի, հաշտարարի անձնային հատկությունների, մասնագիտական ընտրության և կրթության հարցերը դեռևս գիտական հիմնավորումների խնդիր ունեն: Երկրորդ՝ «Հաշտարարի գործունեության սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների համատեքստում» գլխում հաշտարարի դերի, նրա հոգեբանական և մասնագիտական գիտելիքների, գործունեության փուլերի և գործառույթների, հաշտարարի մասնագիտական հատկություններին վերաբերվող գրականության վերլուծություն է արված: Ներկայացված է հաշտարարի կրթական գործընթացի կազմակերպման թիրախային համակարգ:

Երրորդ՝ «Հաշտարարի գործունեության սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների փորձարարական հետազոտություն» գլխում ներկայացված են հետազոտության կազմակերպման փուլերը, ընտրակազմը, մեթոդիկաների հիմնավորում: Ներկայացված են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում և տարբեր լրատվամիջոցներով հաշտարարի մասնագիտության և գործառույթների մասին տեղեկատվության կոնստենտ վերլուծության արդյունքները և փորձարկվողների տարբեր խմբերում դրանց տեղեկացվածության տվյալները: Ներկայացված է նաև գիտական գրականության մեջ հաշտարարի մասնագիտական կարևոր հատկությունների հիմնախնդրի դրվածքը և ուսումնասիրության արդյունքները: Կատարված է հաշտարարի մասնագիտական կարևոր հատկությունների և հմտությունների ուսումնասիրության արդյունքների կարգային վերլուծություն, ներկայացված են հաշտարարի դիմանկարի հիմնական ցուցանիշները: Այս գլխում անդրադարձ կա նաև մասնագիտական փորձին գուզահեռ կանխատեսման ունակությունների զարգացման խնդրին:

Ներկայացված ուսումնասիրությունը մեթոդաբանական լիարժեք հիմքերի վրա, համարժեք մեթոդներով մանրակրկիտ կատարված, ամբողջական գիտական աշխատանք է: Այն հիքրավի, շատ արդիական է:

Ուսումնասիրված է ժամանակակից հաշտարարության ինստիտուտի կառուցվածքային և գործառական տարրերի սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները: Վերլուծված են տարբեր բնույթի կոնֆլիկտների հանգուցալուծման համընդհանուր տեխնիկաները: Մշակված է հաշտարարի մասնագիտագիրը և հոգեբանական դիմանկարը: Դիտարկված է հաշտարարի մասնագիտական ընտրության և գործունեության արդյունավետության կանխատեսման հիմնախնդիրը, ինչը կոնֆլիկտաբանության մեջ լուրջ ներդրում է:

Ստացված տվյալները կիրառական մեծ նշանակություն ունեն. դրանք կարող են կիրառվել հայկական իրականության մեջ հաշտարարության առկա մոտեցումները հստակեցնելու, շտկելու և կարգավորելու, նոր մոտեցումներ մշակելու գործընթացում: Հաշտարարի մասնագիտագիրը և հոգեբանական դիմանկարը կարող են օգտագործվել հաշտարարի մասնագիտական ընտրության և մասնագիտական գործունեության արդյունավետության կանխատեսման գործընթացներում:

Այս բոլորով հանդերձ աշխատանքը ընթացելիս առաջացան որորշակի հարցեր, որոնք առանձնահատուկ մենկնաբանման և լուսաբանման կարիք ունեն:

1. Ատենախոսության վերնագրում կարծում ենք ճիշտ կլիներ որպեսզի նշվեր (ՀՀ բաբաղիախրավական վեճերի լուծման համատեքստում)
2. Չնայած ատենախոսությունը նվիրված է հաշտարարի գործունեության արդյունավետությունը պայմանավորող անձնային և սոցիալ-հոգեբանական գործոններին, ատենախոսության բովանդակությունը ընթացելիս որև մեկ գլուխ, վերնագիր կամ ենթավերնագիր նվիրված չէ անձնային գործոններին (ինչպես դա արվել է օրինակ սոցիալ-հոգեբանական գործոնների դեպքում): Արդարության դեմ չմեղանչելու համար նշեմ, որ ատենախոսության 3-րդ գլխում (3.3.2 և 3.3.3) մասնագիտական կարևոր հատկությունների ուսումնասիրման և վելուծության բաժիններում, վերոնշյալ հարցերին ատենախոսը մասամբ անդրադարձել է:
3. Հետազոտության առաջին վարկածում, երբ ատենախոսը մի շարք հատկությունների թվում նշում է «սոցիալական զգայունություն» և «վարքային ռազմավարությունների մեջ զգոնություն» բառակապակցությունները հստակ չեն և անհասկանալի են այս եզրույթների հոգեբանական բովանդակությունները:
4. Քանի որ հաշտարարի գործունեության արդյունավետությունը ի վերջո պայմանավորված է նաև կողմերի միջև տարվող բանակցությունների վարման հմտություններով, ուստի կարծում ենք ճիշտ կլիներ աշխատանքում որոշակի տեղ հատկացվեր բանակցությունների վարման և որոշումների ընդունման հոգետեխնոլոգիաներին:
5. Աշխատանքում երբեմն հանդիպում են անհաջող ձևակերպումներ և ավելորդ բառակապակցություններ: Օրինակ՝ ինչ է նշանակում «Հաշտարարության գործընթացի մասնակիցները կարող են փնտրել ոչ նյութական շահ՝ մասնավորապես ներողություններ, մյուս կողմից վարքի հասկացում» (էջ 7): Կամ արդիականության առաջին նախադասությունը «սոցիալ-քաղաքական երևույթները ընթանում են լարված տարբերակներում» և երկրորդ պարբերության «Ներկայիս գիտության, տեխնիկայի զարգացումը պարտադրում է որքան հնարավոր է կոնֆլիկտները լուծել առավել կոնստրուկտիվ տարբերակով» (էջ 4):
6. Կան որոշակի տեխնիկական բացթողումներ, որոնք ընդանրության մեջ չեն նսեմացնում կատարված աշխատանքի բարեխղճությունը և գիտականությունը:

Հարկ է միաժամանակ փաստել, որ ներկայացված նկատառումները կրում են մասնավոր բնույթ և չեն արժեզրկում ընդհանուր առմամբ հաջողված ատենախոսությունը: Վերը նշվածի պայմաններում գտնում եմ, որ Հնայակ Մանուկյան թեկնածուական ատենախոսությունն իրենից ներկայացնում է ինքնուրույն ամբողջական, համալիր և ավարտուն հետազոտություն, որում հեղինակին հաջողվել է լուծել իր առջև դրված խնդիրներն ու կատարված հետազոտության արդյունքում ներկայացնել ինքնուրույն առաջարկություններ: Այդ մասին են վկայում պաշտպանության ներկայացվող դրույթներում

և աշխատանքի եզրկացությունում շարադրված հետևությունները: Հմայակ Վահանի Մանուկյանի «Հաշտարարի գործունեության արդյունավետությունը պայմանավորող անձնային և սոցիալ-հոգեբանական (քաղաքացիաիրավական վեճերի լուծման համատեքստում)» թեմայով ատենախոսությունը ավարտուն և գիտական նորույթ պարունակող հետազոտություն է, համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից նմանատիպ աշխատանքներին ներկայացվող հիմնական պահանջներին և հեղինակը՝ Հմայակ Վահանի Մանուկյանը, արժանի է հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝ հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
Ս. Ա. Սեդրակյան

Ս. Ա. Սեդրակյանի ստորագրությունը հաստատում եմ՝

Ուրարտու հավսարանի գիտական գծով պրոռեկտոր

Բժշկական գիտությունների դոկտոր՝

Ժ.Ռ. Բաբայան



«16» դեկտեմբերի 2020թ.